Դաս 1. Ես իմ փոքր հայրենիքում

Լսացուցիչ նյութ

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՛ւն,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ գառապա՛ծ,
Իմ փառապա՛նծ:
Հների մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել,
Դու՝ խաղողի խչմարված վազ,
Վշտերդ՝ շատ, ինքդ ավազ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռված փշատ.
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մսագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Զվարթնոց – ավեր գաճար,
Կոմիտասյան Ծիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում.
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նեղ, նիզակ, մկո՛ւնդ – կոպիտ.
Դու հայրենի ծխանի ծուխ.
Դու՝ անգիր վեպ, դու՝ Սասնա ծո՛ւռ...

Իմ փառապա՛նծ,
Իմ գառապա՛ծ,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ քաղցրանո՛ւն:
Դու մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան.
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց.

Արտաշատյան խաղող սևաչ.
Դու Սևանի վառվող կոհակ,
Երևանի այուն ու խոյակ.
Դու՝ հանգրվան, կանչող փարոս.
Դու հայկական գերբ ու դրոշ.
Խոսուն վկա կուրորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի.
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան –
Միշտ հի՛ն ու նոր իմ Հայաստան:

Պարույր Սևակ

Մթնաձոր

Ժամանակին մի գեղեցիկ աղջիկ է եղել: Ասում են, որ երբ նա ծիծաղել է՝ չորս կողմը վարդեր ու ծաղիկներ են բացվել, իսկ երբ լաց է եղել՝ անձրև է եկել: Դևերը գողացել են նրան ու տարել ձորի ամենամութ տեղը, ուր երբեք արևի լույս չի ընկնում, և չկա ոչ մի կենդանի շունչ: Աղջիկը սկսել է լաց լինել: Ասում են նաև, թե մինչև հիմա էլ կա այդ աղջիկը: Նա միշտ լաց է լինում, դրա համար էլ Մթնաձորում շարունակ թուխպ ու անձրև է լինում: Մեկ-մեկ էլ, երբ եղանակը պարզվում է, ասում են, թե աղջիկը քնի մեջ ծիծաղում է:

Զրույց Անդրանիկի մասին

Ասում են, որ երբ Անդրանիկն իր զորքով շարժվում էր գաղթողների հետևից, հանկարծ ճանապարհի փոսի մեջ տեսնում է մի բարուրած երեխա: Վերցնում է երեխային, մոտենում գաղթողների առաջին խմբին:

–Ո՞վ է այս երեխային թողել,– հարցնում է նա:

Ոչ ոք չի ուզում հանձն առնել: Անդրանիկը դիմում է խորամանկության:

– Եթե երեխան մայր չունի, թրատե՛ք,– հրամայում է վրդովված:

Դրանից սարսափած՝ մի կին ճչում է:

–Վերցրու՛,– դառնացած ասում է Անդրանիկը,– եթե այս երեխան չլինի, վաղը ո՞վ պիտի մեր երկիրը պահի:

Հայկական տեղանուններ

Օտար նվաճողները, տարբեր ժամանակաշրջաններում բռնությամբ տիրանալով Հայաստանին, հաճախ աղավաղել կամ փոխել են հայկական բնաշխարհի նախկին անունները: Այդպես Արագածը դարձրել են Ալագյազ, Արայի լեռը՝ Ղարնըյառըղ, Բյուրակնը՝ Բինգյոլ, Գայլատվա լիճը՝ Բալըղ-գյոլ, Մեծամորը՝ Այղր- գյոլ,Վայոց ձորը՝ Դարալայգյազ, Ակնը՝ Էկին, Խարբերդը՝ Խարփութ...